ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ կարիքների համար ամենագնաց ավտոմեքենայի /Ապրանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 10.10.2019 ժամը 14.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Հ. Սարոյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ռ. Տ. Սահակյան

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Հ. Հարությունյանը

Հ. Հակոբովը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

Բացակայում էր Վ. Ավետիսյանը:

1. **Հանձնաժողովը արձանագրեց**

1.1 Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար Ապրանքի ձեռքերման նպատակով 03.10.2019 էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/32 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով՝ ս.թ. հոկտեմբերի 10-ին, ժամը 14.00-ին:

1.2 Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1	Կարկոմավտո ՍՊԸ	corporate@autogroup.am	00059627

1.3 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Կարկոմավտո ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին /**կցվում է**/:

1.4 Մասնակիցների առաջարկած գինը, նախահաշվային գինը.

ՀՀ դրամ

Հ/հ	CPV	տեխնիկական բնութագիրը	ն/գ	Կարկոմավտո ՍՊԸ		
				առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	34111160	Ամենագնաց ավտոմեքենա	21 300 000	17 375 000	3 475 000	20 850 000

2. **Հանձնաժողովը որոշեց**

2.1 Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա/ պարբերության, և Գնումների մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի առաջին կետի՝ **նիստը կասեցնել երկու** աշխատանքային օրով՝ **մինչև ս.թ. հոկտեմբերի 14-ը ժամը 14.00՝** Կարկոմավտո ՍՊԸ-ին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

3. Հանձնաժողովը արձանագրեց

3.1 Կարկոմավտո ՍՊ ընկերության կողմից նույն օրը՝ ժամը 16.00-ին, ներկայացված դիրքորոշմամբ նոր գնային առաջարկ չի ներկայացվել /**կցվում է**/:

4. Հանձնաժողովը որոշեց

4.1 Կարկոմավտո ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

4.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ Կարկոմավտո ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հարկային հաշիվը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

4.3 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 16.10.2019 ներկայացնել Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագիրը/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Գնահատման նիստը տեղի կունենա սույն արձանագրության 4.2 և 4.3 կետերով սահմանված փաստաթղթերը նշված ժամկետում ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Ռ. Սահակյան

_____ Հ. Հարությունյան

_____ Հ. Հակոբով

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան